ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ suren.galstyan@justice.am

№ 30535-2021

«27» սեպտեմբեր 2021թ.

ՄՏՔ. 56-02

28-09-2021

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ,
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան,
Վազգեն Սարգսյան 26/3, 501ս.
Էլ. հասցե՝ profrosgu@gmail.com

Հարգելի՛ տիկին Ասատրյան

Ի պատասխան Ձեր՝ 13.09.2021թ.-ի թիվ 72-01 գրության՝ ստորև ներկայացնում ենք Արդարադատության նախարարության դիրքորոշումը՝ գրության այն հարցադրումների վերաբերյալ, որոնք վերաբերում են ««Հանրային ծառայությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին (այսուհետ՝ Նախագիծ):

Այսպես, գրությամբ նշվել է, որ Նախագիծը հակասում է Աշխատանքային օրենսգրքին: Այս առումով, հարկ է նկատել, որ Աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով: Իր հերթին, Աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գերատեսչական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող ակտեր կարող են հրապարակվել միայն աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու սահմաններում, իսկ Աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Հետևաբար, Աշխատանքային օրենսգրքով սահմանվում է առանձին բնագավառներում առանձին նորմատիվ իրավական ակտերով աշխատանքային հարաբերությունները կարգավորելու հնարավորությունը:

Նշված տրամաբանության հիման վրա էլ հանրային ծառայությունը և դրա առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ սահմանվում են աշխատանքային հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմեր. օրինակ՝ հանրային ծառայության պաշտոնները դասակարգելու, դասային աստիճաններ (կոչումներ, աստիճաններ) սահմանելու և շնորհելու (զրկելու) դեպքերի, պաշտոնները զբաղեցնելու, վերապատրաստման, կատարողականի (աշխատանքի) գնահատման, շարժունության, կադրերի ռեզերվում գրանցվելու, խրախուսման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, պաշտոնից ազատելու և ծառայությունը դադարեցնելու և այլն:

Ուստի, Նախագծով նախատեսվող կարգավորումները առանձին բնագավառի աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմեր են և, կարծում ենք, չեն հակասում Աշխատանքային օրենսգրքին:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող կարգավորումներով կիրառվող սահմանափակումների իրավաչափությանը, ինչպես նաև հանրային ծառայողների համար հատուկ պարտավորությունների սահմանման անհրաժեշտությանն ու նպատակահարմարությանը՝ դրանց մանրամասն անդրադարձ է կատարվել Նախագծի հիմնավորումներում:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով այն նկատառմանը, որ Նախագիծը նախքան համապատասխան մարմնի կողմից ընդունումը պետք է ներկայացվեր Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների միության միջև կնքված եռակողմ կոլեկտիվ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կողմերին՝ հարկ է նկատել, որ Նախագիծը դեռևս չի ընդունվել համապատասխան իրավասու մարմնի՝ Ազգային ժողովի կողմից և գտնվում է քննարկման փուլում: Իր հերթին, Նախագիծը հանրային քննարկման է ներկայացվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ գլխի, Կառավարության՝ 10.10.2018թ.-ի թիվ 1146-Ն որոշման, ինչպես նաև Կառավարության՝ 25.02.2021թ.-ի թիվ 252-Լ որոշման կարգավորումներին համապատասխան:

Միաժամանակ նկատենք, որ Պայմանագրի հիման վրա 04.06.2021թ.-ին դրա կողմերը կնքել են «Հանրապետական եռակողմ հանձնաժողով ձևավորելու և հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների ցուցակը հաստատելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր): Պայմանագրի 5.1-ին կետի համաձայն՝ ի թիվս այլնի, պայմանագրային պարտավորությունների ապահովման, կողմերին համապատասխան առաջարկների ներկայացման նպատակով ձևավորվում է Հանրապետական եռակողմ հանձնաժողով: Իր հերթին, Պայմանագրի 5.5-րդ կետի և Համաձայնագրի համաձայն՝ Հանրապետական եռակողմ հանձնաժողովի գործող նախագահը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է, իսկ 25.08.2021թ.-ին Արդարադատության նախարարի

թիվ /10.2/26399-2021 գրությամբ Նախագիծը ներկայացված է եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով քննարկումների արդյունքում Նախագծի լրամշակված տարբերակի առկայությունը և կարևորելով շահագրգիռ կողմերի հետ դրա քննարկման անհրաժեշտությունը, Ձեզ ենք ներկայացնում լրամշակված Նախագիծը և ակնկալում հնարավոր սեղմ ժամկետներում դրա վերաբերյալ կարծիքների ներկայացումը, այդ թվում՝ Պայմանագրով նախատեսված կառուցակարգերի շրջանակներում:

Ինչ վերաբերում է Առողջապահության նախարարի՝ 20.08.2021թ.-ի թիվ 65-Ն հրամանի վերաբերյալ հարցադրումներին, առաջարկում ենք դրանք ներկայացնել Առողջապահության նախարարությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Դավիթ Ղարիբյան
ՀՀ ԱՆ «Օրենսդրության զարգացման և
իրավական հետազոտությունների կենտրոն»
հիմնադրամի իրավաբան-փորձագետ
Հեռ.՝ 010 59 40 51